ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

# Diocese of the Armenian Church of North America

630 Second Avenue, New York 16, N.Y. ★ MUrray Hill 6-0710

Archbishop Sion Manoogian
Primate

Թիւ 3452
Յունուար 23, 1962

Հոգեշնորհ
Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեան
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Ս. Խաչ Եկեղեցւոյ
Եունիըն Սիթի.

Սիրելի Հայր Սուրբ,

Ստացած ենք 1962, Յունուար 15 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք, թէ ձեր նախագահութեամբ՝ Յունուար 14ին գումարուած Ծխական ժողովը կատարած է Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է թեմական կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ Եկեղեցւոյ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ, կը վայելեն ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիարք՝ Հէրըլտ Ազմէլեան
Տիրան Զօփուրեան
Գառնիկ Ներսէսեան
Հէրրի Սապոնճեան
Ռիչըրտ Խաչատուրեան

Օրհնելով Ծխական Խորհուրդիդ նոր կազմը՝ կը մաղթենք ձեզի եւ պատուարժան անդամներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի